# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23»

ք. Տաշիր «05» մարտի 2026թ.

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հ. Մարտիրոսյանի, որը գործում է «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 710 500 /հինգ միլիոն յոթ հարյուր տաս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | «ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | ք. Երևան 0014, Արաբկիր, Ադոնց 6/2-40 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Կոնվերս բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900272544017 | Հ/Հ 19300695888100 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ 02254149 |
| ___________ Է. Արշակյան | ___________ Հ. Մարտիրոսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ. |

**Հավելված N 1**
**« 05 » մարտի 2026թ. կնքված**
**N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23**
**ծածկագրով պայմանագրի**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 34921440/5 | Պլաստմասե աղբարկղ 770լ | Plastik-Gogic կամ IPLAST կամ WEBER կամ ESE | Տես ստորև | հատ | 93000 | 465000 | 5 | ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 կամ ըստ բնակավայրի հասցեների | 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր, բայց ոչ ավել քան 10.04.2026թ. |
| 2 | 34921440/6 | Պլաստմասե աղբարկղ 120լ | PLASTIK-GOGIC կամ CONTENUR կամ WEBER | | հատ | 20982 | 5245500 | 250 | | 250 | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06966995

-----------------------------Է. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ
ք. Երևան 0014, Արաբկիր, Ադոնց 6/2-40
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300695888100
ՀՎՀՀ 02254149

-----------------------------Հ. Մարտիրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

***Չափաբաժին 1***

***Պլաստմասե աղբարկղ 770լ (համաձայն EN 840 ստանդարտի)***

- Ծավալը՝ 770լ
- Երկարությունը՝ 1370 մմ ±5% ներառյալ աղբատարի մանիպուլյատորի համար նախատեսված բռնակները
- Խորությունը՝ 780 մմ ±5%
- Բարձրությունը՝ 1350 մմ ±5%
- Քաշը՝ 42 կգ ± 5 կգ
- Առավելագույն բեռնատարողությունը՝ 308կգ և ավելին
- Իրանի և կափարիչի գույնը՝ կանաչ
- Անիվների տրամագիծը՝ 200 մմ
- Գործարանային երաշխիք՝ 1 տարի

ՆԿԱՐ 1

Աղբարկղի նկարագրությունը՝

Կառուցվածքը, պարամետրերը և անվտանգության պահանջները համապատասխան EN 840, RAL-GZ 951, ISO 9001 և ISO 14001 ստանդարտների պահանջների:

Աղբարկղի իրանը պետք է ունենա հստակ և ընթեռնելի կաղապարային մակնշում (ոչ թե պիտակավորված) և պարտադիր պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- Արտադրող կազմակերպության անվանումը կամ ապրանքային նշանը,
- Արտադրության ամիսը և տարին,
- Օգտագործված հումքի տեսակը,
- Ծավալը,
- Առավելագույն բեռնատարողությունը,
- Ստանդարտը համաձայն որի այն արտադրված է:

Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն:

Աղբարկղը պետք է տեղակայված լինի շարժական 4 անիվների վրա, որոնք պետք է ամրացված լինեն կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը՝ բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ: Աղբարկղը պետք է ունենա լրացուցիչ ամրացնող կառուցվածք՝ աղբատարի մանիպուլատորի բռնիչի համար:Աղբարկղը ունի ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող մեծ կափարիչ, որն ունի բացելու համար նախատեսված առնվազն երկու բռնակ, գույնը կանաչ: Աղբարկղը պետք է ունենա վավեր ISO 9001, ISO 14001, RAL-GZ 951 և EN 840 ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատներ, որոնց ներկայացումը մատակարարման ժամանակ պարտադիր է: EN 840 ստանդարտին համապատասխանության սերտիֆիկատի կամ դրա հավելվածի մեջ պետք է հստակ արտացոլված լինի անկախ հեղինակավոր սերտիֆիկացնող մարմնի՝ TUV Reihnland կամ TUV SUD կողմից (ոչ թե արտադրող գործարանի կամ վերջինիս կողմից փորձարկման արդյունքների վրա այլ կազմակերպության կողմից) փորձարկման ենթարկված ապրանքների քանակը, դրանց ծավալը, քաշը, բեռնատարողությունը, չափերը, օգտագործված նյութը: Առավելագույն թույլատրելի շեղումները աղբարկղերի պարամետրերում կազմում է ±5%:

Աղբարկղը պետք է լինի հետևյալ ապրանքանիշներից որևէ մեկը Plastik-Gogic կամ IPLAST կամ WEBER կամ ESE:Աղբարկղը նոր է, արտադրությունը առնվազն 2025թ., նախկինում չօգտագործված և չվերանորոգված: Ապրանքի տեխնիկական բնութագրերի ակնհայտ անհամապատասխանության դեպքում պատվիրատուի ընտրությամբ երկու աղբարկղ պետք է մատակարարի հաշվին ենթարկվի ՀՀ պետական փորձաքննության և պատվիրատուին ներկայացվի փորձագետի եզրակացություն՝ աղբարկղի մակնշման, ծավալի, չափերի, հումքի, բեռնատարողության, ստանդարտի, ինչպես նաև սերտիֆիկատների վավերականության և արժանահավատության վերաբերյալ:

Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:

Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 հասցեով:Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, միացումը, փորձարկումը, ինչպես նաև Պատվիրատուի անձնակազմի ուսուցումն իրականացվում է մատակարարը, իր հաշվին և իր միջոցներով:

Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «կամ համարժեք» բառերը:

*ՆԿԱՐ 1*



| ԳՆՈՐԴ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան<br>ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94<br>ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն<br>Հ/Հ 900272544017<br>ՀՎՀՀ 06966995 | «ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ<br>ք. Երևան 0014, Արաբկիր, Ադոնց 6/2-40<br>Կոնվերս բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 19300695888100<br>ՀՎՀՀ 02254149 |
| --------------------------------Է. Արշակյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | --------------------------------Ս. Մարտիրոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

| *Չափաբաժին 2* |
|---|
| **Պլաստմասե աղբարկղ 120 լ** |
| Ծավալը՝ 120 լ<br>Նյութը՝ Բարձր խտայնության ցածր ճնշման (HDPE) պոլիէթիլեն, ուլտրամանուշակագույն ճառագայթման հանդեպ կայուն<br>Լայնությունը՝ 480 մմ (±5%)<br>Երկարությունը՝ 550 մմ (±5%)<br>Բարձրությունը (կափարիչի փակ վիճակում)՝ 950 մմ (±5%)<br>Քաշը՝ 8 կգ (±5%)<br>Առավելագույն բեռնատարողությունը՝ 48 կգ<br>Գույնը՝ Կանաչ<br>Անիվները՝ 2 հատ, ռետինապատ, 200 մմ տրամագծով<br>Կափարիչը՝ Տափակ, աղբամանի գույնի և նույն նյութից, առնվազն երկու ամրակով իրանին միացված: Չափսը՝ նույնը, ինչ իրանի վերնամասը:<br>Արտադրման տարեթիվը՝ Ոչ ավելի վաղ, քան 2025թ.<br>Վիճակը՝ Նոր (նախկինում չօգտագործված և չվերանորոգված)<br>Գործարանային երաշխիք՝ 1 տարի՝ ընդունման օրվանից սկսած<br>Հետևյալ ապրանքանիշներից որևէ մեկը՝ PLASTIK-GOGIC կամ CONTENUR կամ WEBER<br>Աղբարկղի կառուցվածքը, պարամետրերը և անվտանգության պահանջները պետք է համա-պատասխանեն EN 840, ISO 9001 և ISO 14001 ստանդարտներին: Համապատասխան սերտիֆիկատները պետք է ներկայացվեն մատակարարման ժամանակ: EN 840 ստանդարտին համա-պատասխանության սերտիֆիկատի մեջ պետք է հստակ արտացոլված լինի սերտիֆիկացնող մարմնի՝ TÜV Rheinland կամ TÜV SÜD կողմից փորձարկման ենթարկված ապրանքների քանակը, դրանց ծավալը, քաշը, բեռնատարողությունը, չափսերը, օգտագործված նյութը: Աղբարկղերը պետք է լինեն նոր, արտադրությունը ոչ պակաս 2025թ, նախկինում չօգտագործված և չվերանորոգված: Մատակարարումից առաջ անհրաժեշտ է ներկայացնել ծագման երկրի սերտիֆիկատ:Նախքան մատակարարումը պետք է պատվիրատուի հաստատմանը ներկայացվի նմուշ: Ապրանքի տեխնիկական բնութագրերի ակնհայտ անհամապատասխանության դեպքում պատվիրատուի ընտրությամբ մեկ աղբարկղ պետք է մատակարարի հաշվին ենթարկվի անկախ փորձաքննության և պատվիրատուին ներկայացվի փորձաքննության եզրակացություն:Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 հասցեով և Մեծավան բնակավայր հասցեով:Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, միացումը, փորձարկումը, իրականացվում է մատակարարը, իր հաշվին և իր միջոցներով: |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06966995

-----------------------------Է. Արշակյան
/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ
ք. Երևան 0014, Արաբկիր, Ադոնց 6/2-40
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300695888100
ՀՎՀՀ 02254149

-----------------------------Հ. Մարտիրոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Հավելված N 2**
**« 05 » մարտի 2026թ. կնքված**
**N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23**
**ծածկագրով պայմանագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 34921440/5 | Պլաստմասե աղբարկղ 770լ | ... % | ... % | ... % | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 | 465000 |
| 2 | 34921440/6 | Պլաստմասե աղբարկղ 120լ | ... % | ... % | ... % | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 | 5245500 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06966995

-------------------------------Է. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ
ք. Երևան 0014, Արաբկիր, Ադոնց 6/2-40
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 193006958881OO
ՀՎՀՀ 02254149

-------------------------------Հ. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված 4.2**
**«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «05» «մարտի» 2026թ.

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Մարտիրոսյանի, (նույնականացման քարտի համարը՝ 008455446), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում,

Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

| | |
|---|---|
| Ընկերության անվանումը | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| Ընկերության հասցեն | ք. Երևան, Արաբկիր վարչ. Շրջ., Ադոնց 6/2, 40, |
| Ընկերության սպասարկող բանկի անվանումը | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Ընկերության բանկային հաշվեհամարը | 19300695888100 |
| Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը | 02254149 |
| Ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը | |

. Մարտիրոսյան

Կ.Տ.

05/03/2026

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1] |
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 19300695888100 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02254149 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն - ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ - 06966995 | |
| 12. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը - ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | |
| 13. Շահառուի հաշվի համարը - 900275081108 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ է 900 000 (ինը հարյուր հազար) | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **Որակավորման ապահովման համար** | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝<br>Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23»<br>Պայմանագրի ծածկագիրը՝ « ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23» | |
| 19. Վճարման պայմանները՝ **Ակցեպտավորված վճարում** | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ.<br>Կ.Տ.<br>24.գ<br>"___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ.<br>Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝<br>"___" ___ 20___թ. |

---

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Հավելված 5.1**
**«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի ապահովում)**

ք. Երևան «05» « Տետրի » 2026թ.

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Մարտիրոսյանի, (նույնականացման քարտի համարը՝ 008455446), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

| | |
|---|---|
| <u>Ընկերության անվանումը</u> | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| <u>Ընկերության հասցեն</u> | ք. Երևան, Արաբկիր վարչ. Շրջ., Ադոնց 6/2, 40, |
| <u>Ընկերության սպասարկող բանկի անվանումը</u> | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| <u>Ընկերության բանկային հաշվեհամարը</u> | 19300695888100 |
| <u>Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը</u> | 02254149 |
| <u>Ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը</u> | |

Հ. Մարտիրոսյան

Կ.Տ

05/03/2026

Օր/ամիս/տարի* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*